

զայն ըստ առաջին աւերակ վիճակին : Թէպէտ Գաբրիէլ ոչ անսաց բանից դատաւորին , եւ ոչ յանձն առ քակել զշինուածն , եւ մանաւանդ մատոյց զհրովարտակն զոր տրուեալ էր Մէլք Սալէհ Իսմայիլ յաւուրս իշխանութեան իւրոյ , սակա չինութեան վանացն այնորիկ : Եւ դատաւորն ընթերցաւ զայն , այլ ոչ ընկալաւ , եւ գրեաց զերկուս գիրս ամբաստանութեան , մին 'ի դիմաց բնակչաց քաղաքին , եւ զերկրորդն 'ի մեծամեծաց եւ 'ի գիտնականաց , եւ ընտրեաց յերեւելեացն այլազգեաց զարս տաան հաւատարիմ եւ խելահաս , եւ առաքեաց զնոսա յեգիպտոս հանդերձ թղթովք : Եւ 'ի հասանիլ նոցա 'ի Գահիրէ , հանին զարձանագրութիւնս 'ի դիւանէ եւ զպատճէն առաջին հրովարտակին , որ խափանէր զշինութիւնն զայն , եւ ապա պատմեցին յատենի անդ , որպէս թէ յամուեալ եւ ընդդէմ կացեալ են այլազգեաց քրիստոնեայք երկրին Պաղեստինոյ , եւ անցեալ զօրինօք եւ զսահմանօք մեծին Օմարայ : Իսկ Սուլթանն լուեալ զայս ամենայն , կոչեաց ըզդպրապետն 'ի դիւանէ անտի , եւ հրամայեաց նա զրել հրովարտակ , զի կործանեցի վանքն այն եւ դարձցի 'ի վիճակն առաջին եւ մնասցէ աւերակ , զի զգապտացեալ քրիստոնէից մի եւս համարձակեսցեն անցանել զսահմանօք մեծին Օմարայ : Առեալ պատգամաւորացն զհրովարտակն եւ զգեցեալ իւրաքանչիւր վերարկու պատուոյ , դարձան յերուսաղէմ : Ժողովեցան այլազգիք խուռն բազմութեամբ 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս 'ի սրահի մեծի Մղկիթին Օմարայ , ուր ընթերցան զհրովարտակն 'ի լուր ամենեցուն : Եւ ապա ելեալ անտի բազմութեամբ դիմեցին 'ի վերայ Ս. Փրկչի վանաց , եւ քակեալ կործանեցին զայն բրեւով մինչեւ 'ի հիմունս , եւ դարձեալ եղին զայն յաւեր եւ յապականութիւն :

Յետ այնորիկ կոչեաց դատաւորն զխոխանորդն Հայոց Գիաբրիէլ , եւ արգել զնա օրինօք դատարանի եւ սպասուեր ետ չհակառակիլ միւսանդամ վասն շինութեան վանաց , եւ գրեալ զգապտովճիւս զայս (հէօճճէթ) ետ 'ի ձեռս նորս . 'ի Նապան ամսոյ 400 (1353) . որ եւ ցարդ պահեալ կայ 'ի կարգս գրոց :

Են եւ այլ Արարական յեաւոր եւ թուղթ դրեալ 'ի ժա-